264
Կ-99

# ՑՈՒՑԱԿ

Մշտնջենաւոր շաբաթական թափօ-րին՝ մէջ Յարութեան Ս. Ծընկաղ շնորհա-պարգև սուրբ Տեղեաց չարչարանացն Քսի ։

Տպեալ ըստ հնատպաց կարգադրութեանց, և արա-րողութեանց նախնեաց մերոց ։

Յամի Տն. 1838 ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ։

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ ։

4939

2000 - Աէ

Ողջոյն մեր . տացուք քեզ ամէն 'ի գաւիթս քո , 'ի մէջ նոր Երուսաղէմի . Փառք'' .

2004




Ճըշմարտապէս խաչելու թեամբ ։
անպարտականդ՝ ինձ ողոր մեա ։

Սածմամբ մարմնոյդ ի փայտ խա չին ։
սուրբ բևեռօքն ի յիս գը թա ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
им. А. Мясникяна
38576. 67

Յիններորդ ժամու գումարին եկեղեցականք առաջի սենէ, կի դրան ուէիզին . Անոնս շուրջառ միայն Թափօրապետն , և 'ի ձեռս Թափօրականաց մոմ լուսաւորեալ . իսկ Նախասարկաւագն զգեցեալ շապիկ և սողաւորս 'ի գլուխ և բուրվառ 'ի ձեռին , ասէ 'ի ձայն . և եւս խաղաղութ֊ե զՏր աղաչեսցուք" . Արկանէ Թափօրապետն խունկ . և ասէ օրհնութիւն և փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն : Եւ գնան զոյգ զոյգ 'ի սուրբ քանն ? ասելով . շարական՝

Արծաթ սիրու՛թըն մոլեալ յուդա • բձ
զՏէր ըզմեծ ըզվարդապետըն ընդ երեսուն արծաթոյ հրէիցըն մատնէր : Ընդ որում եւ համբուրեցից զ քեզ՝ զնա կալարուք • ով համբոյր նենգութ֊ե նշան և աւխթ մահու : Մերկացաւ յինքենէ զանձային որ հօգին . և ըզգեցաւ ըզապստամբաց՝ ոսկ հանդերձ արկաւ զիւրեաւ :

Սաղմոսագն . Որթէ .

Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն .

Թափօրականքն . Եւ ը հոգւոյդ քում . Երկիրպագումէ լուսաւորուք .

Թափօրապետն . Սէյ աւետարանիս Յսի Քսի որ ը Ղուկասու .

Թափօրականքն . փառք քեզ տէր ած մեր . Պռօշխումէ . Ասէ

Աձ .

Թափօրապետն ։ Վասն չարչարանաց Տն մերոյ Յսի Քսի ․

Զի հարկ էր մի մի ըստ տօնի արձա֊կել նոցա ։ Եւ նոքա աղաղակեին ամ֊ բազմութեամբն եւ ասեին ․ բա՛րձ զդա՛ եւ արձակեա՛ մեզ զԲարաբբայ ։ Որ էր վն խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին եւ սպանութեան մտեալ ի բանտ ։ Դարձեալ պիղատոս սկսաւ խօսել ․ քանզի կամէր արձակել զյս ։ Եւ նո֊քա անդրեն աղաղակեին եւ ասեին ․ ի խա՛չ հա՛ն զդա ։ Եւ նա երիցս ասէ ցնոսա ․ զի՞նչ չար արար դա ․ ո՛չինչ վը֊նաս մահու գտի ի դմա ․ խրատեցից զդա , եւ արձակեցից ։ Եւ նոքա սաստ֊կեին մեծաձայն՝ եւ խնդրեին զնա ի խաչ հանել ։

Սարկաւագն ․ փառք քեզ տէր ած մեր ․ խնդրեսցուք" ․
Թափօրականքն ․ Կեցո՛ տր ․ Տր ողորմեա՛ տր ողորմեա՛ տր ողո" ․
Թափօրապետն ․ Քում ամենազօր եւ հրաշալի չարչարանացդ քս" ․

---

Սարկաւագն ․ Եւ եւս խաղաղութեան զտէր աղօթեսցուք" ․
Թափօրապետն ․ Օրհնութիւն եւ փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն" ․
Եւ անտի երթան 'ի տեղին՝ ուր զհանդերձն Քսի բաժանեցին

Դէ Զ ահրն լուսոյ յառաւօտին՝ ի յու֊

բաժթու հրնոյ զառակին՝ . կայր առաջի դատաւորին՝ ծառայն նստէր ՚ի յատենին՝ . ՚ի հարցանել պիղատոսի՝ որոյ ոչ առնէր պատասխանի . զի կանխասաց գիրքն լռեցի՝ եղէ եւ մարդ որ ոչ խօսի :

Սարկաւագն . Որթի .

Քահանայն . Խաղաղութիւն ամենեցուն .

Դպիրքն . Եւ ընդ հոգւոյդ քում . Երկիւղածութեամբ լուարուք .

Սարկաւագն . Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յոհաննու .

Դպիրքն . Փառք քեզ տէր Աստուած մեր . Պռոսխումէ . Ասէ Ան .

Քահանայն . Ի ժամանակին հանդերձից Տն մերոյ Յսի Քսի .

Իսկ զինուորքն իբրեւ հանին ՚ի խաչ զՅս , առին զհանդերձս նորա . եւ արարին չորս մասունս . իւրաքանչիւր զինուորի մասն : Իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի , ՚ի վերուստ ձորձանկեալ ամենեւին : Ասեն ցմիմեանս . մի պատառեսցուք զայդ . այլ արկցուք վիճակս ՚ի վերայ դորա՝ ում եւ ելցէ . զի լցցի գիրն՝ որ ասէ . բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս , եւ ՚ի վերայ պատմուճանի իմոյ զվիճակ

արկին։ զինուորքն զայս ինչ գործեցին

Սարկաւագն · Փառք քեզ տր ած մեր · խնդրեսցուք" ·

Թափօրականն · Կեցո՛ տր · Տր ողորմեա՛ տր ողորմեա տր ողո" ·

Թափօրապետն · Փառք ամենազօր և հրաշալի չարչարանացդ քո" ։

---

Սարկաւագն · Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք" ·

Թափօրապետն · Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" ։

Եւ անտի իջանեն 'ի խաչ գիւտն · ասելով՝

ած Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո քս · գաւազան զօրութե 'ի յերկրի երևեալ · Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք ։ Զոր հրեշտակն ծածկեալ զանթառամելին ըղ գանձն փափագմանց թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ · Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք ։ Սա է զէն յաղթութեան հաւատացելոց ախոյեան և կընիք յաղթող ընդ դէմ թշնամւոյն · Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք" ։

Սարկաւագն · Որթի ·

Թափօրապետն · Խաղաղութիւն ամենեցուն ·

Թափօրականն · Եւ ը҃ հոգւոյդ քում · Երկիրպագանեմք լուսաւորիչ ·

Թափօրապետն · Սբյ աւետարանիս Յսի Քսի որ ը҃ Մատթէոսի ·

Թափօրականն · Փառք քեզ տէր ած մեր · Պռօսխումէ · Լսէ ած ·

Թափօրապետն ։ Տէր մեր Յս Քս տաք ։

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յա֊րեւելից՝ եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մար֊դոյ ։ Զի ուր գէշն իցէ, անդր ժո֊ղովեսցին արծուիք ։ Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ ար֊եգակն խաւարեսցի . եւ լուսին ոչ տա֊ցէ զլոյս իւր . եւ աստեղք անկցին յերկնից . եւ զօրութիւնք երկնից շարժեսցին ։

Սարկաւագն . Փառք քեզ տր ած մեր . Սուրբ խաչիւս" .
Թափօրախմբն . Կեցո՛ տր . Տր ողորմեա՛ տր ողորմեա՛ տր ող" .
Թափօրապետն . Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց քս ած մեր" .

---

Սարկաւագն . Եւ եւս խաղաղութեան զտր աղաչեսցուք ընկալ կեցո" .
Թափօրապետն . Օրհնութի եւ փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն" .
Եւ անտի ելանեն 'ի տր Լուսաւորչի եկեղեցին . առեալ

Մարգարէից գերագոյն եւ' մեծ֊ դկ
'ի ծնունդս կանանց՝ . որ ըզտնօրէ֊նութիւն ած որդւոյն 'ի յարգանդէ ծանեար հոգւովդ՝ . աղաչեա՛ զտրծ֊վսն մանկանց եկեղեցւոյ ։ Յորո֊վայնէ յորովայն երկրպագօղ քնի .

որ ընդ հուրն ա̃ծ մերով բնութեամբ մըկըրտեցե՞ր 'ի յորդանան · ողորմեա՛ զ̃րծ վասն մանկանց եկեղեցւո՛յ :
Կատարումն ծրինաց և՛ նախակնիգ-քըն շնորհաց · որ հոգւոյն 'ի դըժո-խըս քարոզեցեր ըզփըրկութիւն գա-ըստեամբըն քո՛ · ողորմեա՛ զ̃րծ վասըն մանկանց եկեղեցւո՛յ :

(Այս աւետարան ընթեռնանի հանդէպ սուրբ Կարապետի Սեղանոյն ·)

Սաղմոսուն · Որթի ·

Թափօրադէպն · Խաղաղութիւն ամենեցուն ·

Թափօրախօսն · Եւ ը̃ հոգւոյդ քում · Երկիրպագութ̃ լուսաւորչք ·

Թափօրադէպն · Սր̃յ աւետարանիս Յի̃ի Քի̃ի որ ը̃ Յոհաննու ·

Թափօրախօսն · Փառք քեզ տէր ա̃ծ մեր · Պռօսխումէ · Ասէ Ա̃ծ ·

Թափօրադէպն · Մկրտիչ Տե̃ն մերոյ Յի̃ի Քի̃ի ·

'Ի վաղիւ անդր տեսանէ զյ̃ն զի գայր առ նա · և ասէ, ահաւասիկ գառըն ա̃յ՝ որ բառնայ զմեղս աշխարհի : Սա է, վասըն որոյ եսն ասէի · զկնի իմ գայ այր · որ առաջի իմ եղև · զի յառաջ իմն էր քան զիս : Եւ ես ոչ գիտէի զնա · այլ զի յայտնի լինիցի իղի,

վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել։ Եւ վկայեաց Յովհաննէս՝ և ասէ, թէ տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից, և հանգչէր ՚ի վերայ նորա։ Եւ ես՝ ոչ գիտէի զնա․ այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով, նա ասաց ցիս․ յոյր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ և հանգչիցի ՚ի վերայ նորա, նա է՝ որ մկրտէ Հոգւովն սրբով։ Եւ ես՝ տեսի, և վկայեցի՝ եթէ սա է որդին ա̃յ։

Սարկաւագն․ Սէ ծննդաւորքն աղաչեսցուք զՏ̃ր որք զՀոգին՝ դ

Թափօրապետն․ Որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զերջանիկ զմաքուր տատրակն անապատի՝ զսուրբ կարապետն և զմկրտիչն քո զՅովհաննէս ք̃ս ա̃ծ մեր․ և հաղորդս արարեր զնա կամաւոր չարչարանաց քոց։ Նորա՝ բարեխօս առ քեզ ունիմք․ որք աստ և ընդ ա̃մ տիեզերս ն̃ք կցեն։ Ո̃վ զի աղօթիւք նորա և բարեխօսութեամբն՝ խաղաղացուսցես զկենցաղավարութիւն մեր․ փրկելով յերևելի և յաներևոյթ

թշնամեացն ։ Շնորհեա՛ մեզ տէր ըստ օրինակի նորին կեալ․ և զվախճանն մեր կնքեա՛ ուղղափառ խոստովանութեամբ ՚ի յոյս կենացն յաւիտենից․ զի և մեք արժանի եղիցուք մտանել յերկնային խորանսն լուսոյ՝ և ժառանգել զպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ ։ Եւ ընդ նմին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

---

Սարկաւագն․ Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք"․

Թափօրապետն․ Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն"․

Եւ անտի գնան ՚ի տեղին՝ ուր է Սիւնն․ յոր կապեցին զՔս ՚ի տանն պիղատոսի․

ասելով՝

դձ Այսօր ՚ի կատարումն աստուածային ընթրեանց նոր ուխտի ճշմարտութեան՝ քո ՚ի վերնատունն խորհրդոյ՝ տարամերժեալն յուդա՛ս ՚ի հօտէ փրկչու․ ուսոյ՝ և զին զմահն աստուծոյ՝ դիմեալ կամաւ ՚ի մահ խաչի առ ՚ի բառնալ ըզմեղս աշխարհի․ վասն որոյ խըն-

Նայեա՛ց ՚ի մեզ ք՛ս կամաւո՛ր քո չար-չարանօքդ ։

Մ՛այօր զոր յերկնայի՛ն լուսեղինա՛ցն ահիւ պատուեալ բա՛նդ ա՛՛ծ՝ նորա-մացեա՛լ ՚ւ դա՛ւք երրո՛րդեցուցն՝ զի՛մա-նալի՛ լոյս ՚ի գիշերին Ջահիւք և սու-սերօք եկեալ ըմբռնե՛լ զանըմբռնե-լի՛դ ։ վ՛ս որո՛յ երկրպագեմք անձա՛-ռելի՛ քո խոնարհութե՛դ ։

Սարկաւագն ․ Որթի ․

Թափօրապետն ․ Խաղաղութիւն ամենեցուն ․

Թափօրաջանեն ․ Եւ ընդ հոգւոյդ քում ։ Երկիւղածութ՟ լուսաւորիչ ․

Թափօրապետն ․ Սբյ աւետարանիս Յսի Քսի որ ըստ Յօհաննու ․

Թափօրաջանեն ․ Փառք քեզ տէր ած մեր ․ Պռօսխումէ ․ Ասէ Ած ․

Թափօրապետն ․ Վասն նախատանաց տեառն մերոյ Յսի Քսի ․

Եւ զինուորացն արարեալ պսակ ՚ի փշոց՝ եդին ՚ի գլուխ նորա, և զգե-ցուցին նմա հանդերձ ծիրանի ․ և գային առ նա՝ և ասէին, ո՛ղջ եր ար-քայ հրէից ․ և հանէին նմա ապտակս ։ Ե՛լ դարձեալ պիղատոս արտաքս և ա-սէ ցնոսա ․ ահա՛ ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես՝ ո՛չ-

Վնաս ինչ՝ ՚ի նմա ոչ գտանեմ: Ե՛լ յս արտաքս, և ունէր պսակ ՚ի փշոց՝ և հանդերձ ծիրանի. և ասէ ցնոսա. ահա այրդ՝ ցձեզ:

Սարկաւագն . փառք քեզ տէր ած մեր . խնդրեսցուք" .
Թափօրականն . Կեցո՛ տէր . Տէր ողորմեա տէր ողորմեա տէր ողո" .
Թափօրապետն . Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ քն" .

---

Սարկաւագն . Եւ ևս խաղաղութ զՏր աղաչեսցուք ընկալ կեցո" .
Թափօրապետն . Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" .
Եւ անտի ելանեն ՚ի տէ լեառն սարապեալն ՚ի գողգոթայ . ասեն լով

գն Ի յուրբաթու ժամ երրորդին՝ բևեռեցար տէր ՚ի խաչին. լուծեր զկապանս նախաստեղծին՝ և կապեցեր զթշնամին. զիս ամրացո՛ ընդ հովանեաւ կենդանարար քո նշանին. և ՚ի ծաղկեն յարևելից՝ լուսաւորեա՛ լուսով նորին:

Ի°րանեալ աւազակին՝ բացեր զդուռն այգին դրախտին. ըստ հաւատոյ սրտի նորին՝ կատարեցեր զխնդրելին. տուր և ինձ տէր ըստ նմին՝ լսել զձայն պատասխանին. այսօր ընդ իս էցես յայգին՝ ՚ի հայրենիս քո առաջին:

Սարկաւագն · Որթի ·

Թափօրապետն · Խաղաղութիւն ամենեցուն ։

Թափօրակիրն · Եւ ընդ հոգւոյդ քում ։ Երկիրպագումք լուսաւորուք ·

Թափօրապետն · Սբյ աւետարանիս Յսի Քսի որ ըստ Յօհաննու ·

Թափօրակիրն · Փառք քեզ Տէր Ած մեր · Պռօսխումէ · Ասէ

Ած ·

Թափօրապետն · Վասն խաչելութեան տեառն մերոյ Յսի Քսի ·

Եւ նոքա առեալ տանէին զնա · և բարձեալ էր ինքնին զխաչափայտն , և ելանէր 'ի տեղին՝ որ անուանեալ էր գագաթն , և կոչիւր եբրայեցերէն գողգոթա ։ Ուր և 'ի խաչին հանին զնա · և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի , և 'ի միջի զՅս ։ Գրեաց և տախտակ մի պիղատոս , և եդ 'ի վերայ խաչին · և էր գրեալ · Յս նազովրեցի թագաւոր հրէից ։ Զայն տախտակ ընթերցան բազումք 'ի հրէից , զի մօտ էր 'ի քաղաքն անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յս · և էր գրեալ եբրայեցերէն՝ դաղմատերէն և յունարէն ։

Եւ ապա 'ի ծունկս անկեալ ասեն զսբ. Ածն երիցս առանց փառաւորեալն · և զկնի որ. ածին Տէր ողորմեա ևս 'ի ծունկս ։

Սարկաւագն · Փառք քեզ տէր ած մեր · Սուրբ Խաչիւ"·
Թափօրականն · Կեցո՛ տէր · Տէ ողորմեա տէր ողորմեա տէր ող"·

Թափօրայքն · Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով · և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց · քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան ։ Եւ այժմ վասն սրբոյ ամենայն քո նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւն ամենայն աշխարհի ։

---

Սարկաւագն · Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք ընկալ"·
Թափօրայքն · Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն"·
Եւ անտի իջանեն ՚ի տէ Պատանատեղն · ասելով՝

բձ Զարդարիչն ամենայն՝ այսօր խնդրի պարգևս ՚ի պիղատոսէ՝ · և արկօղն ըղձմյս ով զօթոց հաւանի պատիլ ՚ի յուսեփայ ։ Ընդունարանն ամենայն՝ այսօր դնի ՚ի նոր գերեզմանի՝ · և գանձն անմահութեան կենաց մատանեաւ քահանայից ։ Արարածոց փրկութի՛ւն քո՛ այսօր եդաւ ՚ի նորափոր վիմի · զոր օրհնեն զօրք երկնից երգով՝ պահպանի ՚ի զինուորաց ։

Սարկաւագն . Որթի .

Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն .

Թափօրականքն . Եւ ընդ հոգւոյդ քում . Երկիւղածութեամբ լուարուք :

Թափօրապետն . Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու .

Թափօրականքն . Փառք քեզ տէր Աստուած մեր . Պռօսխումէ . Ասէ Աստուած .

Թափօրապետն . Վասն Թաղման տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Յետ այսորիկ աղաչէր զպիղատոս Յովսէփ որ յարիմաթեայ էր, աշակերտ յիսուսի ի ծածուկ վասն ահին հրէից . զի բարձցէ զմարմինն յիսուսի . և հրամայեաց պիղատոս : եկն և եբարձ զնա : Եկն և Նիկոդեմոս որ եկեալ էր առ յիսուս՝ ի գիշերի զառաջինն , և եբեր զմուռս խառն ընդ հալուէս՝ իբրև լիտրս հարիւր : Առին զմարմինն յիսուսի , և պատեցին կտաւովք և խնկովք հանդերձ , որպէս օրէն էր հրէից պատել : Եւ էր ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ . և ի պարտիզի անդ գերեզման նոր , յորում ոչ ոք երբեք՝ էր եդեալ : Անդ՝ վասն ուրբաթուն հրէից , զի մօտ էր գերեզմանն՝ եդին զյիսուս :

Սարկաւագն · Փառք քեզ տէր ած մեր · խնդրեսցուք" ·
Թափօրախօսն · Կեցո՛ տր · Տէր ողորմեա տր ողորմեա տր ողո" ·
Թափօրապետն · Քում ամենազօր և հրաշալի Թաղմանդ քս ած" ·

---

Սարկաւագն · Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք" ·
Թափօրապետն · Օրհնութի՜ և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" ·
Եւ ապա երթան ՚ի տը Գերեզման տն մերոյ Յսի Քսի · ասելով՝

ակ Առաքեցար ՚ի հօրէ բանդ ած ՚ի փրկութիւն ազգի մարդկան · օրհնեմք զքեզ տր ած ։ ՚Ի գերեզման իջեր թագաւոր անմահ՝ և ՚ի հօրէ ոչ մեկնեցար՝ · օրհնեմք զքեզ տր ած ։ ՚Ի յերրորդ աւուր յարեար ածապէս · և ՚ի յերկինս համբարձար փառօք յաթոռն քո տէր՝ · օրհնեմք զքեզ սուրբ ած ։

( Այս աւետարանս երբեմն ՚ի ներքս ՚ի սուրբ Գերեզման ընթեռնանի · և երբեմն առաջի դրան նորա · )

Սարկաւագն · Որթի ·

Թափօրապետն · Խաղաղութիւն ամենեցուն ·

Թափօրախօսն · Եւ ը̃ հոգւոյդ քում · Երկիւղածութբ լուարուք ·
Թափօրապետն · Սբյ աւետարանիս Յսի Քսի որ ը̃ Յօհաննու ·
Թափօրախօսն · Փառք քեզ տր ած մեր · Պռօսխումէ · Ասէ ած ·
Թափօրապետն · Վասն Յարութեան տեառն մերոյ Յսի Քսի ·

Բայց մարիամ կայր արտաքոյ գե -

րեզմանին՝ և լայր. և մինչդեռ լայր՝
խոնարհեցաւ ի գերեզմանն։ Եւ տե-
սանէ երկուս հրեշտակս ի սպիտակս,
զի նստէին մի՝ ի սնարից, և մի՝ յա-
նոտից՝ ուր կայր մարմինն Յսի։ Եւ
նոքա՝ ասեն ցնա. Կին դու, զի՞ լաս.
ասէ ցնոսա. զի բարձին զՏէրն իմ ի
գերեզմանէ աստի՝ և ոչ գիտեմ ուր
եդին զնա։ Զայս իբրև ասաց, դար-
ձաւ ի թիկունս կոյս, և տեսանէ զՅս
զի կայր, և ոչ գիտէր թէ Յս իցէ։
Ասէ ցնա Յս. Կին դու՝ զի՞ լաս, զո՞
խնդրես. Նմա՝ այսպէս թուեցաւ՝
թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա.
Տր՝ եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ
ուր եդեր զնա, զի ես առից զնա։
Ասէ ցնա Յս. Մարիամ. և նա՝ դար-
ձաւ և ասէ ցնա եբրայեցերէն. Ռաբ-
բունի, որ թարգմանի՝ վարդապետ։

Թոփօրմանեան. Տէր ողորմեա. և Երգ.

Սարկաւագն. Խնդրեսցուք հաւատով միաբանութիւն ի Տնէ"։

Թոփօրմանեան. Կեցո զմր. Տր ողորմեա զմր ողորմեա զմր ող"։

Թոփօրմանեան. Վասն ամենազօր և հրաշալի յարութեան Քի"։

---

Սարկաւագն. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ"։

38576-67
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
Ա. Մյասնիկյանի անվան

Թափօրապետն · Օրհնութի՛ւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն" ·
Եւ ապա շուրջ գալով զգերեզմանաւն տան · և գան 'ի միջակէն
մեր 'ի յուժաթափման տեղին սրբուհւոյ Աճաննէն · ասելով

Մեռար սիրով խոնարհեցար՝ 'ի փրը-
կութի մեր մարմնացար՝ · Նովին մարմ-
նովըն խաչեցար՝ 'ի գերեզման մահու-
իջար՝ · Այսօր յարեար Ա՛ծաբար՝ 'ի
հրեշտակաց քարոզեցար՝ · Եկայք փըր-
կեմք ընդ զուարթնոյն' ասեմք օրհ-
նութի յարուցելո՛յն ։
Երևեցար խորհրդաբերիցն՝ յողջոյն կե-
նաց ուրախալից՝ · և՛ 'ի լերինն
գալիլեայ՝ առաքելոց մեծապատուից՝ ·
արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ
տեսանել յօրըն վերջին՝ · Եկայք փըր-
կեմք ընդ զուարթնոյն' ասեմք օրհ-
նութի յարուցելո՛յն ։

Սարկաւագն · Որթէ ·

Թափօրապետն · Խաղաղութիւն ամենեցուն ·

Թափօրակիցն · Եւ ը հոգւոյդ քում · Երկիրպագութ լուսարնք ·
Թափօրապետն · Ահա աւետարանիս Յսի քսի որ ըստ Յոհաննու ·
Թափօրակիցն · Փառք քեզ տր ած մեր · Պռոսխումէ · Ասէ ած ·
Թափօրապետն · Ի ժամ խաչելութե ան մերոյ Յսի քսի ·

Եւ կային առ խաչին յի մայր նո-

րա . և քոյր մօր նորա մարիամ կղ-
լէօպայ . և մարիամ մագդաղենացի ։
Յս իբրև ետես զմայրն , և զաշակեր-
տըն , զոր սիրէր , զի կայր մօտ . ասէ
ցմայրն , կին դու , ահա՛ որդի քո ։
Ապա ասէ ցաշակերտն . ահա՛ մայր քո ։
և յայնմ ժամանակէ էառ աշակեր-
տըն զնա առ իւր ։ Յետ այսորիկ գի-
տաց յս̃ , եթէ ահա ամ̃ ինչ կատա-
րեալ է . զի կատարեսցի գիրն , ասէ .
Ծարաւի եմ ։ Եւ անդ կայր աման
ինչ լի քացախով . և նոցա սպունգ
լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ
եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին
ի բերան նորա ։ Իբրև էառ յս̃ ըզ-
քացախն համեմեալ լեղւովն՝ ասէ .
ամ̃ ինչ կատարեալ է . և խոնարհե-
ցուցել զգլուխն՝ աւանդեաց զոգին ։

Սուլիւագն . Ան զածածկինն և ց՛ամ սէս թարէխօս արտաց" .
Թափօրաչխանէն . Կեցո՛ մը . Տէ՛ ողորմեա՛ մը ողորմեա՛ մը ողը" .
Թափօրադէտն . Ընկա՛լ մը զաղաշանս մեր բարեխօսութ. սըր" .
Օրհնեալ մը մեր յս̃ քս̃ . ամէն . Հայր մեր որ յերկինս ես" .
Օրհնեա՛լք եղերուք ՚ի շնորհաց սրբոյ հոգւոյն . երթայք խաղ-
ղութ. . և մը եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանս ։ ամէն ։

Յիններորդ ժամու գումարին եկեղեցականք առաջի սեղանի դրան ուխտին. Առնու շուրջառ միայն Թափորապետն. և ՚ի ձեռս Թափորականաց մոմ լուսաւորեալ. իսկ Նախադասկանացն զգեցեալ շապիկ և տղաւարտ ՚ի գլուխ և բուրվառ ՚ի ձեռսին, ասէ ՚ի ձայն. և ես խաղաղութեն զՏէր աղաչեսցուք". Արկանէ Թափորապետն խունկ. և ասէ օրհնութիւն և փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն. Եւ գնան զոյգ զոյգ ՚ի տունն բանս, ասելով. շարական

Գի՛ գիշերին յորում մատնիւր փրկիչն մեր ՚ի մա՞հ խաչին. Եւ ՚ի լեառն ձիթենեաց. աղօթելով զայս ասէր հա՛յր անցո՛ յինէ՞ն զբաժա՛կս: Իսկ անօրէն աշակե՛րտին Թո՛ղեալ ըղդու՛թ-[illegible]ելոյ Նորա՛. և փութա՛յր առ քահա՛նայսն. ասէր ինձ զի՞նչ կամի՛ք տալ. զի մատնեցի՞ց ըզ վարդապետա՛ն: Ա՛յ ղո՛վեա՛լ հրէիցըն կրշաւեցին ա՛րծաթ բարդո՛ւմ. ա՛ռեալ տարան ա՛ռ պիղատոս. առեն ՚ի խա՛չ հան ՚ի խաչ. զի հա՛յհոյի՛չ է՛ օրինաց:

Սուքիասեան ; Որթի ;

Թափօրագնող . Խաղաղութեան ամենեցուն ;

Թափօրաքնութիւն. Եւ Է հոգւոյդ-քոյս. Երկիւղածութ լուարուք .

Թափօրապետն . Այս աւետարանիս Յսի Քսի որ ը̅ Մարկոսի .

Թափօրախօսն . փառք քեզ տէր ած մեր . Պատասխանեմք . Աւր

ԱԾ .

Թափօրապետն . Վասն մատնութեան տեառն մերոյ Յսի Քսի .

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն, խորհուրդ արարեալ քահանայապետացն հանդերձ ծերօքն և դպրօք, և ամ̅ ատեանն . կապեցին զյս̅՝ և տարան մատնեցին պիղատոսի ։ Եհարց զնա պիղատոս և ասէ . դու ես թագաւորն հրէից . Նա պատասխանի ետ նմա և ասէ՝ դու ասես ։ Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն . և նա ոչինչ տայր պատասխանի ։ Իսկ պիղատոս դարձեալ հարցանէր զնա . ոչինչ տաս պատասխանի . տես՝ քանի ամբաստանեն զքեն ։ Եւ յս̅ այնուհետև ոչինչ ետ պատասխանի . մինչև զարմանալ յոյժ պիղատոսի ։

Սարկաւագն . փառք քեզ տր ած մեր . խնդրեսցուք" :

Թափօրախօսն . Կեցո տր . Տր ողորմեա տր ողորմեա տր ողո" .

Թափօրապետն . Քում ամենակալ և հրաշալի չարչարանացդ քն" .

---

Սարկաւագն . Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք" .

Թափօրապետն . Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" :

Եւ անտի երթան ՚ի տեղին՝ ուր զհանդերձն Քնի բաժանեցին։

գկ Սամիկական դասք զինուորացն՝ արկին
հանդերձ նախատանաց · այնմ որոյ
զգեստն է լոյս փառաց՝ իբրեւ զօթոց
զինքեամբ արկած՝ · ՚ի ծունր իջեալ
կատակէին՝ զգլուխն եղեգամբ հար-
կանէին՝ · պսակ ՚ի փշոց բոլորէին ընդ
փուշ մեղացն բարձողին ։

Բապէրց արեգականն՝ ընդոտուն արար
զգիշերանմանն՝ · զստուերըն քօղ արկ
մերկութեան՝ զի մի տեսցէ ակն անար-
ժանն՝ · ՚ի միջօրեայն նսեմացաւ՝ յոր-
ժամ ադամ մեղօք մեռաւ՝ · ՚ի յին-
ներորդն ՚ի լոյս դարձաւ՝ յորժամ
մահուամբ մահըն լուծաւ ։

Սրկաւագն · Որթի ·

Թափօրապետն · Խաղաղութիւն ամենեցուն ·

Թափօրականն · Եւ ընդ հոգւոյդ քում · Երկիւղածութբ լուարուք ·

Թափօրապետն · Սբյ աւետարանէս Յնի Քնի որ ըստ Ղուկասու ·

Թափօրականն · Փառք քեզ տէր ած մեր · Պռօսխումէ · Ասէ
Ած ·

Թափօրապետն · Տէրն մեր Յն Քն ասէ ։

Հայր , թող դոցա · զի ոչ գիտեն՝
զինչ գործեն · Եւ ՚ի բաժանել զհան

դերձս նորա՝ արկին վիճակս ։
Եւ կայր ժողովուրդն հայեցեալ․ ան-
գոսնէին զնա և իշխանքն հանդերձ
նոքօք՝ և ասէին․ զայլս ապրեցոյց,
ապրեցուսցէ և զանձն եթէ դա է
ք͞ս, որդի ա͞յ ընտրեալն ։ Այպն առ-
նէին զնա և զինուորքն․ եկեալ ա-
ռաջի՝ մատուցանէին նմա քացախ ։
Եւ ասէին․ եթէ դու ես թագա-
ւորն հրէից՝ փրկեա զանձն քո ։
Եւ էր գիր գրեալ ՚ի վերայ նորա․
յունարէն, և դաղմատերէն, և եբ-
րայեցերէն գրով, եթէ սա է ար-
քայն հրէից ։

Սարկաւագն․ փառք քեզ տէր ած մեր․ խնդրեսցուք" ․
Թափօրականն․ Կեցո՛ տր․ Տր ողորմեա տր ողորմեա տր" ․
Թափօրապետն․ Քում ամենազօր և հրաշալի չարչարանաց ք͞ս" ․

---

Սարկաւագն․ Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք" ․
Թափօրապետն․ Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" ․
Եւ անտի իջանեն ՚ի խաչ գիւտն․ ասելով

Ընճառելի երևումն երևեալ դշխո- ած
յին․ նստելով յատենի յերուսաղէմ․
խնդրէր ըզպատուական փայտ խաչին․
յոր ըզմեռեալն բևեռեցին ։ Մեծա-

ձայն հրամանաւն ժողովեալ հրեշ-
էից · ցուցանելով նոցա ըզպատուական
փայտ խաչին · յոր ելեալ բարձրացաւ
արարիչն ա՛րարածոց : Ընդ յայտնիլ
նշան խաչին ՚ի տեղւոջըն սրբութեան ·
բուրմա՛մբ անուշա՛հոտ խնկոց · և՛ ըն-
ցա՛ն տիեզերք բոլորք մեծապէս պա՛րգևօքն:

Սարկաւագն · Որթի ·

Թափօրադիրն · Խաղաղութիւն ամենեցուն ·

Թափօրակիրն · Ընդ հոգւոյդ քում · Երկիրպագումք լուսարարք ·

Թափօրադիրն · Սբ. աւետարանէն Յսի Քսի որ ըստ Մատթէոսի ·

Թափօրակիրն · Փառք քեզ Տր Ած մեր · Պռօսխումէ · Ասէ Ած ·

Թափօրադիրն · Վասն կենդանատու նշանի Տեառն մերոյ Յսի Քսի ·

Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս · և յայնժամ կոծեսցին ամ ազգք երկրի · և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք: Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ · և ժողովեսցեն զընտրեալս նորա ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մինչև ՚ի ծագս նոցա : ՚Ի թզենւոյ անտի ուսարուք զառակըն · զի յորժամ նորա ոստքն կակ-

ղասցին ; և տերևն ցցուեսցի ; գիտէք
թէ մերձ է ամառն ։

Սարկաւագն • փառք քեզ Տր ած մեր • Սուրբ խաչիւս" ։
Թափօրականին • Կեցո Տր • Տր ողորմեա Տր ողորմեա Տր ողո" ։
Թափօրապետն • Պահպանիչ և յոյս հաւատացելոց քո ած մեր" ։

---

Սարկաւագն • Եւ ևս խաղաղութ զՏր աղաչեսցուք ընկալ կեցո" ։
Թափօրապետն • Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" ։
Եւ անտի եկեալ 'ի դր Լուսաւորչի եկեղեցին • ասելով

Հրաշափառ տէրդ և միշտ բարեխօսա- Գ.Ձ
մօրդ • որ յառաջ գիտութեամբ ըզ-
փրկութեն հայաստանեայց ըսկըզբնա-
ւորեալ • 'ի պարթևական մեղապարտ
ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր •
վասն որոյ բարեխօսութեամբ սորա
փրկիչ կեցո զմեզ այժմ և 'ի քո ա-
հաւոր գալըստեանն ։

Հրաշալի զարմանալեօք երանելին տր-
դատայ • զանտանելի ըզչարչարանս
'ի յանձն էառ • և երեք հնգօք ա-
մօք 'ի մէջ թունաւորացն բնակեալ
անդընդային տանջանօքն 'ի վիրապ-
ին • վասն որոյ բարեխօսութեամբ
սորա փրկիչ կեցո զմեզ այժմ և 'ի

քոյ ահաւոր գալըստեանն ։
Հրաշագործ քո բանիւդ և՛ մեծ ո՛ղ-
ղորմութեամբդ` ։ ելեալ բըժըշկեր
ըզհարուածեալսն ՚ի դիւաբաղխ սաս-
տիցն` ։ Երկըրպագուս առնելով զամե-
նեսեան ՚ու երրորդութեանդ` ։ վասն
որոյ բարեխօսութեամբ սորա փրկեա՛
կեցո ըզմեզ` այժմ և ՚ի քոյ ահաւ" ։

(Այս աւետարանս ընթեռնանի հանդէպ սուրբ Լուսաւորչին
Սեղանոյն ։)

Սարկաւագն ։ Որթի ։

Թոփօրաղերն ։ Խաղաղութիւն ամենեցուն ։

Թոփօրախօսն ։ Եւ ը̄ հոգւոյդ քում ։ Երկիւղածութ լուսաւորիչքս

Թոփօրաղերն ։ Ա̃յ աւետարանէս Յ̃ի Ք̃ի որ ը̄ Յօհաննու ։

Թոփօրախօսն ։ փառք քեզ տր ած մեր ։ Պռօսխումէ ։ Ասէ ած ։

Թոփօրաղերն ։ Տէրն մեր Յ̃ն Ք̃ն ասէ ։

Ես եմ հովիւն քաջ ։ Հովիւ քաջ զան-
ձըն իւր դնէ ՚ի վերայ ոչխարաց ։
Իսկ վարձկանն , որ ոչ է հովիւ , որոյ
ոչ իւր են ոչխարքն , իբրև տեսանէ
զգայլն զի գայ` թողու զոչխարսն և
փախչի ։ և գայլն յափշտակէ զնոսա
և ցրուէ ։ Քանզի վարձկան է , և
չէ՛ փոյթ նմա վասն ոչխարացն ։

Ես եմ հովիւն քաջ. եւ ճանաչեմ զիմսն, եւ ճանաչիմ յիմոցն:

Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց:

Նա՝ եւ այլ եւս ոչխարք են իմ, որք ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր. եւ ձայնի իմում լուիցեն. եւ եղիցին մի հօտ՝

եւ մի հովիւ:

Սարկաւագն. Մեծ ճգնաւորօքն աղօթեսցուք զՏէր որք վճարսն".

Թափօրապետն. Որ ընտրեցեր եւ ընկալար զերանելի եւ զերջանիկ զսրբազան Հայրն մեր զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն Քս̃ Ած̃ մեր. եւ հաղորդս արարեր զնա կամաւոր չարչարանաց քոց: Արդ՝ բարեխօս առ քեզ ունիմք. որք սա եւ ընդ Ած̃ սիրեցելոյ սբ̃ք եղեն: Ա̃պ զի աղօթիւք նորա եւ բարեխօսութեամբն խաղաղացուսցես զկենցաղաւարութիւն մեր. փրկելով յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց: Շնորհեա՛ մեզ Տէր Ա̃ծ օրինակի նորին կեալ. եւ զվախճանն

մեր կնքեալ ուղղափառ խոստովանութե՛
՚ի յոյս կենացն յաւիտենից · զի և
մեք արժանի եղիցուք մտանել յերկ-
նային խորանսն լուսոյ՝ և ժառանգել
զպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի
սրբոց քոց զարքայութիւնն : Ու ե
նովին գոհանալով փառաւորեսցուք
զքեզ ընդ հօր և ընդ ս՛րբ հոգւոյդ ·
այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից · ամէն :

---

Սարկաւագն · Ըստ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք" ·
Ժողովուրդն · Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" ·
Ըստ անոր գնան ՚ի տեղին՝ ուր է Սեղանն · յոր կազմեցին զբեմ ՚ի
տանն պէշտաման : ասելով

գծ Տ՛էր որ ՚ի հրեղէն զօրաց երկնից
միշտ փառաբանեալ երկրպագիս բա-
նըդ աթոռակից առ հայր մարմնով ըն-
կալեալ ընդ հօր ընդ քո վ՛ իմ զպա-
տարագս · ուստի կամաւ կրելով զեր-
կիւղ՝ ՚ի հրեշտակաց զօրանայիր զօրա-
ցուցիչդ երկնաւորաց և երկրաւո-
րաց · վասն որոյ խնայեա՝ ՚ի մեղս քոց
կամաւո՛ր քո չարչարանօք :

Այսօր զոր սերոբէքըն ծածկէին ըզ-դէմս յահէ փառաց ածութեան իսկ կորըստեան որդին յուդաս՝ ի համ-բոյր մերձեալ նենգութբ՟. Նըշանակ և՛ առիթ մահու անմահին. վա՜ որո՞յ երկրպագեմք անճառելի քո խոնար-հութեանդ:

Սաղմոսն. Ոլթի.

Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն.

Թափօրականն. Եւ ընդ հոգւոյդ քում. Երկիրպագումք լուսաւորիչ.

Թափօրապետն. Սրբոյ աւետարանիս Յսի Քսի որ ըստ Մարկոսի

Թափօրականն. փառք քեզ տէր ած մեր. Պռօսխումէ. Ա

Ած.

Թափօրապետն. Վասն նախատանաց տեառն մերոյ Յսի Քսի.

Եւ զինուորքն տարան զնա ի ներքս ի գաւիթն՝ ուր հրապարակն էր. և կոչեն միանգամայն զամենայն զգուն-դըն: Եւ զգեցուցանէին նմա քղա-միդ կարմիր, և ծիրանիս. և եդին ի գլուխ նորա պսակ արարեալ ի փշոց: Եւ սկսան ողջոյն տալ նմա և ասել. ողջ եր արքայդ հրէից:

Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ. և թքանէին ընդ երեսս. և ի ծունր ի

ջեալ երկիրպագանէին նմա ։
Եւ իբրեւ կատակեցին զնա , մերկա-
ցուցին զքղամիդն եւ զծիրանիսն . եւ
զգեցուցին նմա զիւր հանդերձն . եւ ա-
ծին արտաքս . զի ՚ի խաչ հանիցեն զնա ։

Սարկաւագն . Փառք քեզ տէր ած մեր . խնդրեսցուք" .
Թափօրականքն . Կեցո՛ տր . Տր ողորմեա՛ տր ողորմեա՛ տր ողո" .
Թափօրապետն . Քում ամենազօր եւ հրաշալի չարչարանացդ քս" .

---

Սարկաւագն . Եւ եւս խաղաղութե զտէր աղաչեսցուք ընկալ" .
Թափօրապետն . Օրհնութի եւ փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն" .
Եւ անտի ելանեն ՚ի մէջ լեառն տապանակելի ՚ի գողգոթայ . առնլով՝

գկ Սոսկնեալ ծառոյ մահաբերին՝ այնմ
որ բուսաւ ՚ի մէջ դրախտին՝ . փոխան
բարձեր ընդփայտ խաչին՝ ՚ի գողգո-
թայ հաներ տեղին՝ . զիմ առ ՚ի մեղս
անկեալ զոգի՝ եւ ծանրածոյն բարձող
բեռին՝ . բարձ ՚ի յուսոյն ըստ ոչ-
խարին՝ հան ՚ի յերկինս յուխտեալ
տեղին ։
Յանմահից մեռանելոյ զմեռեալ հո-
գիս կենդանացո՝ . Թաղմամբ ՚ի նոր
գերեզմանի՝ զթաղեալս ՚ի մեղս մե-
րածեալ , ՚ի դէբ ներքնումն իջանե-

լով՝ ՚ի գրոյ մեղաց վերաբերեալ․ ՚ի ստուեր մահու քո բնակելով լուսաւորեա՛ և զիս հոգւով ։

Սարկաւագն․ Որթի․

Թափօրապետն․ Խաղաղութիւն ամենեցուն․

Թափօրակիրն․ Եւ ը՟ հոգւոյդ քում․ Երկիւղածաւք լուարուք․

Թափօրապետն․ Ս՟յ աւետարանիս Յ՟ի Ք՟ի որ ը՟ Ղուկասու․

Թափօրակիրն․ Փառք քեզ տ՟ր Ա՟ծ մեր․ Պռօսխումէ․ Ասէ Ա՟ծ․

Թափօրապետն․ Վասն խաչելութե՟ան տեառն մերոյ Յ՟ի Ք՟ի․

Իբրև չոգան ՚ի տեղին կոչեցեալ գագաղթն․ անդ հանին զնա ՚ի խաչ․ և զչարագործսն զոմն ընդ աջմէ՝ և զոմն ընդ ձախմէ խաչեցին ։

Եւ յ՟ս ասէ․ հայր, թող դոցա․ զի ոչ գիտեն՝ զինչ գործեն․ և ՚ի բաժանել զհանդերձս նորա՝ արկին վիճակս ։ Եւ կայր ժողովուրդն հայեցեալ․ անդոսնէին զնա և իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին․ զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն եթէ դա է ք՟ս, որդի ա՟յ ընտրեալն ։

Բայց և զինուորքն․ եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ ։ Եւ ասէին․ եթէ դու ես

թագաւորն հրէից՝ փրկեա՛ զանձն քո։ Եւ էր գիր գրեալ ՚ի վերայ նորա յունարէն, և դաղմատերէն, և եբրայեցերէն գրով, եթէ սա է արքայն հրէից ։

Եւ ապա ՚ի ծունկս անկեալ ասեն զՍբ Ածն երիցս առանց փառաւորելոյ . և զկնի որ ածէն Տէր ողորմեա ես ՚ի ծունկս ։ Սարկաւագն . Փառք քեզ տէր ած մեր . Առ խաչիս ասա՛" . Թափօրականքն . Կեցո՛ տր . Տր ողորմեա տր ողորմեա տր ող" .

Թափօրապետն . Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով . և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց . քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան ։ Եւ այժմ վասն սորոյ ամենայն քո նշանի՝ շնորհեա՛ զերկնային զխաղաղութիւնդ ամ աշխարհի ։

---

Սարկաւագն . Եւ ևս խաղաղութեն զՏր աղաչեսցուք ընկալ" ։ Թափօրապետն . Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" . Եւ անդ իջանէն ՚ի տը Պատարագելն . ասելով

բձ Կենդանի՛ն յաւիտենից քո ամօր խնդրի որդ մեռեալ ՚ի պիղատոսէ՝ . և՛ մերկութե ծածկոյթն ադամայ .

յանձն առնու սպանել 'ի յովանեփայ ։
Անմահութեանց՝ տուօղ քո այսօր . 'ի հող մահու խոնարհեցաւ . և բնակեալն 'ի լոյս անմատոյց՝ թաղեցաւ մարմնով 'ի ստորս երկրի ։
Արեգակն արդարութեան քո այսօր եղաւ 'ի գբի ստուերականի . և փառացն հօր ճառագայթ՝ ծածկեցաւ մարմնով 'ի մէջ երկրի ։

Սարկաւագն . Որթի .

Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն .

Թափօրականն . Եւ ընդ հոգւոյդ քում . Երկիրպագութիւն լուսարարաց .

Թափօրապետն . Ամէն աւետարանին Յի Քի որ ըստ Ղուկասու .

Թափօրականն . Փառք քեզ տր ած մեր . Պռօսխումէ . Ասէ Ած .

Թափօրապետն . Վասն թաղման տեառն մերոյ Յի Քի .

Ահա այր մի անուն յովսէփ , որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար ։ Սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա . յարիմաթեայ քաղաքէ հրէից . որ և ինքըն իսկ ակնունէր արքայութեան այ ։ Սա մատուցեալ առ պիղատոս՝ խնդրեաց զմարմինն յի ։

Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պա-
տառականաւ . և եդ ՚ի կռածոյ գե-
րեզմանին . ուր չէր բնաւ զոք եդեալ։
Եւ օրն էր ուրբաթ . և շաբաթ լու-
սանայր ։

Սարկաւագն . փառք քեզ տէր ած մեր . խնդրեսցուք" .
Ժողովրդականքն . Կեցո՛ տր . Տր ողորմեա տր ողորմեա տր ողո" .
Ժողովրդեանն . Քում ամենազօր և հրաշալի թաղմանդ քն" .

---

Սարկաւագն . Եւ ևս խաղաղութե զտէր աղաչեսցուք ընկալ" .
Ժողովրդականքն . Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" .
Եւ անտի երթան ՚ի մէջ Գերեզման տն մերոյ Յսի Քսի . ասելով

ակ Յարուցեա՛լ տէրն ՚ի գերեզմանէ՛ն
միածինն որպէս փայլակն՝ և լոյս փա-
ռաց ծագեաց յաշխարհս . և՛ երկի՛նք
և երկիրս ցնծայի՛ն ։
Մեծ է յարութի՛ ած որդւո՛յն՝ քան
զի զօրու՛նք երկնից բացեա՛լ եղեն՝ և
հաստ անդո՛ւնդ բո՛ւրեաց յաշխարհս՝ . և՛
լցո՛յց զտարա՛ծս ամե՛նայն ։
Զօրք երկնից իջեա՛լ էին և բանա-
կեա՛լ շուրջ ըզգերեզմանաւն . և հո-
գեղէն բարբառովք երգէին՝ տր օրհ-
նեա՛լ է քո՛ յարութի՛ւնդ ։

( Այս աւետարանս երբեմն 'ի ներքս 'ի սուրբ Գերեզմանն ընթեռնանի . և երբեմն առաջի դրան նորա . )

Սարկաւագն . Որթի .

Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն .

Թափօրակիրն . Եւ ընդ հոգւոյդ քում . Երկիրպագուք լուսարանիս .

Թափօրապետն , Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի .

Թափօրակիրն . փառք քեզ տէր Աստուած մեր . Պռօսխումէ . Ասէ Աստուած .

Թափօրապետն . Վասն Յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի .

---

Եւ իբրև էանց շաբաթն՝ Մարիամ Մագդաղենացի՝ և Մարիամ յակոբայ և սողոմէ , չոքան պատրաստեցին խունկս · զի եկեսցեն և օծցեն զնա ։
Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն , գան 'ի գերեզմանն ընդ արևագալն ։
Եւ ասէին ցմիմեանս , ով թաւալեցուսցէ մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին ։ Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր վէմն 'ի գերեզմանէն · քանզի էր մեծ յոյժ ։
Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն՝ տեսին զերիտասարդ մի , զի նստէր ընդ աջմէ կողմանէ , զգեցեալ պատմուճան սպիտակ · և զարհուրեցան ։

Եւ նա ասէ ցնոսա․ մի՛ երկնչիք՝ զի խնդրէք զՆազովրեցին զխաչեցեալն, յա֊ րեաւ․ չէ՛ աստ․ ահաւասիկ տեղին, ուր եդին զնա։

Թափօրապետն․ Տէր ողորմեա․ և Երգ․

Սարկաւագն․ Խնդրեսցուք հաւատով միաբանութիւն ՚ի Տեառնէ"․

Թափօրապետն․ Կեցո՛ Տէր․ Տէ՛ր ողորմեա Տէր ողորմեա Տէր ող"․

Թափօրապետն․ Փառք ամենազօր և հրաշալի յարութեան քո"․

---

Սարկաւագն․ Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք"․

Թափօրապետն․ Օրհնութի՛ւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն"․

Եւ ապա շուրջ գալով զեկեղեցւոյն տուն, և գան ՚ի միջակն մեր ՚ի յուղաթափման տեղին սրբուհւոյ Աստուածնին․ ասելով

Որ երևեցար խոնարհաբերիցն՝ յողջոյն կենաց ուրախալից․ և ՚ի լերինն Գալիլեայ՝ առաքելոց մետասանից․ միաբանեաց զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրէն մերձին․ Եկայք փոր֊ կեսցուք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելո՛յն։

Աւետիս՝ որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք․ եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ․ գայ պսակել զքեզ փա֊

ածք եւ ընդ առաջ պճնեալ զար-դուք · երգեամ երգ նոր յարուցելոյն նընջեցելոց կենաց պարգեւատուին ։

Սարկաւագն · Որթի ·

Թափօրապետն · Խաղաղութիւն ամենեցուն ։

Թափօրականն · Եւ ընդ հոգւոյդ քում · Երկիւղածութ. լուարուք ·

Թափօրապետն · Ի սրբոյ աւետարանէս Յսի Քսի որ ըստ Յոհաննու ·

Թափօրականն · Փառք քեզ տր ած մեր · Պռօսխումէ · Ասէ ԱԾ ·

Թափօրապետն · Ի ժամանակի խաչելութեան տեառն մերոյ Յսի Քսի ։

Եւ կային առ խաչին յի մայր նորա · եւ քոյր մօր նորա Մարիամ կղէօպայ · եւ Մարիամ մագդաղենացի ։ Յս իբրեւ ետես զմայրն, եւ զաշակերտն, զոր սիրէր, զի կայր մօտ · ասէ ցմայրն, կին դու, ահա որդի քո ։ Ապա ասէ ցաշակերտն, ահա մայր քո · եւ յայնմ ժամանակէ էառ աշակերտն զնա առ իւր ։ Յետ այսորիկ գիտաց յս, եթէ ահա ամ ինչ կատարեալ է · զի կատարեսցի գիրն, ասէ · Ծարաւի եմ ։ Եւ անդ կայր աման լի քացախով · եւ նոքա սպունգ լցեալ քացախով ընդ եզուոյ՝ շուրջ

եդեալ զմշտոկաւ զոպայն՝ մատուցին ի բերան նորա ։ Իբրեւ էառ յս̃ ըզ-քացախն հանդերձ լեղւովն՝ ասէ . ա̃մ ինչ կատարեալ է . եւ խոնարհե-ցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զո-գին ։

Սարկաւագն . Սբ̃ զա̃ծածինն եւ զա̃մ սբ̃ս բարեխօս արասց" .
Թափօրականքն . Կեցո̃ տր̃ . Տր̃ ողորմեա տր̃ ողորմեա տր̃ ողո̃" .
Թափօրապետն . Ընկալ տր̃ զաղաչանս մեր բարեխօսութ̃ սրբ̃" .
Օրհնեալ տր̃ մեր յս̃ քս̃ . ամէն . Հայր մեր որ յերկինս ես" .
Օրհնեա՛լք եղերուք ՚ի շնորհաց սրբոյ հոգւոյն . երթա՛յք խա-ղաղութ̃ . եւ տր̃ եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս . ամէն .



Սիրով նգար և արտաս ւօք ,
՚ի տապանին ինձ ողոր մեամ ,

Սերաբերեամ քո յարու Թեամբդ ,
զմարդիկ ՚ի կենաս և յիս դը Թա ,

Յիններրորդ ժամու գումարին եկեղեցականք առաջի սենե-կի դրան ուխտին · Անոնք շուրջառ միայն Թափօրապետն , և 'ի ձեռս Թափօրականաց մոմ լուսաւորեալ , իսկ Նախատօնակա-ւորն զգեցեալ շապիկ և ստղաւարտ 'ի գլուխ և բուրվառ 'ի ձեռին , ասէ 'ի ձայն . և ես խաղաղութեն զձեր աղաչեսցուք" · Արկանէ Թափօրապետն խունկ . և ասէ օրհնութիւն և փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն . Եւ գնան զոյգ զոյգ 'ի սուրբ բանն յ-աւելով . շարական`

Որ Թագաւորդ ես Թագաւորաց **բձ**
ք͞ս` 'ի ծառայէ դատապարտեցար` համ-
բերելով վ͞ն մեր · երկայնամիտ տէ՛ր
քեզ փառք :
Որ պատուական խաչիւդ քո ք͞ս` և
՛որ արեանդ քո հեղմամբ կեցու-
ցանել զմեզ կամեցար · երկայնամիտ
տէ՛ր քեզ փառք :
Որ մարդասիրապէս վասն ամենեցուն
ամենայնի համբերեցեր և 'ի մահու
զմահ կործանեցեր` · երկայնամիտ տէր
քեզ փառք :

Սաղմոսագին . Որթի .
Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն ․
Թափօրականքն , Եւ ը͞ն հոգւոյդ քում . Երկիրպագեսցուք լուսաւորիչք ·

Թափօրադէրն . Այս աւետարանիս ՅՈՒԷ ՔՈՒԷ որ Ը Մատթէոսի .

Թափօրաճանն . փառք քեզ տէր մեր . Պատասխանի . Ասէ Ա՜ծ .

Թափօրադէրն . Տէր մեր Յն Քն .

Յս եկաց առաջի դատաւորին . եւ եհարց զնա դատաւորն՝ եւ ասէ . դու ես Թագաւորն հրէից . եւ յն ասէ . դու ասես ։

Եւ ի չարախօսելն նորա ի քահանայապետիցն եւ ի ծերոց , ոչինչ ետ պատասխանի ։

Յայնժամ ասէ ցնա պիղատոս . ո՞չ լսես՝ որչափ զքեզ հակառակ քո վկայեն ։ Եւ ո՛չ ետ նմա պատասխանի՝ եւ ո՛չ բան մի , մինչեւ զարմանալ դատաւորին յոյժ ։

Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն արձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին ։

Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր՝ որում անուն էր յեսու բարաբբայ ։ Իբրեւ ժողովեցան՝ ասէ ցնոսա պիղատոս . զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ . զյեսու

բարաբբայ, եթէ զյս զանուանեալն
քս ։ Քանզի գիտէր՝ թէ առ նա-
խանձու մատնեցին զնա ։

Սարկաւագն . փառք քեզ տէր ած մեր . խնդրեսցուք" ։
Թափօրականին . Կեցո՛ տր . Տր ողորմեա տր ողորմեա տր ողոր" .
Թափօրապետն . Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ քս" .

---

Սարկաւագն . Եւ ևս խաղաղութե զտէր աղաչեսցուք ընկալ" .
Թափօրապետն . Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" .
Եւ անտի երթան 'ի տեղին՝ ուր զհանդերձն քհի բաժանեցին.

Վերնականքըն զարհուրեալ տեսին ըզ տէրըն մերկացեալ․ և՛ ըզ հանդերձսըն բաժանեալ պատմուճանին վիճակ արկեալ․ ըզձեռսն և զոտսըն ծակեցին՝ ըստ յայտնապէս դաւթեան ձայնիւն․ ընդ փայտ խաչին բևեռեցին․ զպատուանուն որ գրեա՛ց 'ի տախտակին ։ դէ

Պատկառանօք հինն ադամայ՝ որ ձայնեցար վասըն նորա․ ջընջեա՛ զամօթ մեղաց լըրբերին՝ որով զերես իմ ծածկեցին․ որ ներեցեր չար ծառային՝ ածել ձեռօք քեզ ապտակին․ հար ուժգնակի զդէմս չարին՝ որպէս և զիմս եհար ուժգին ։

Սարկաւագն. Որթի.

Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն ։

Թափօրականն. Եւ ը̃ հոգւոյդ քում. Երկիւղածութ̃ լուարուք.

Թափօրապետն. Սր̃յ աւետարանիս Յս̃ի Քս̃ի որ ը̃ Մատթէոսի.

Թափօրականն. Փառք քեզ տր̃ ած̃ մեր. Պռօսխումէ. Ասէ Ած̃.

Թափօրապետն. Վասն խաչելութ̃ե տեառն մերոյ Յս̃ի Քս̃ի.

Եւ հանեալ զնա ՚ի խաչ՝ բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ ՚ի մարգարէէն. բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս՝ և ՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին ։
Եւ նստեալ պահէին զնա ։
Եւ եդին ՚ի վերայ գլխոյ նորա՝ գըրեալ զվնաս նորա. Թէ այս է յս̃ թագաւորն հրէից ։
Յայնժամ հանին ընդ նմա ՚ի խաչ երկուս աւազակս. մի յաջմէ նորա՝ և մի յահեկէ ։
Եւ որք անցանէինն, հայհոյէին զնա. շարժէին զգլուխս իւրեանց ։
Եւ ասէին. վահ՝ որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս շինէիր զնա՝

ապրեցո՛ զքեզ . եթէ որդի ես ա՛յ
էջ ՚ի խաչէդ ։

Սարկաւագն . փառք քեզ տր ած մեր . խնդրեսցուք հաւա" .
Թափօրապետն . Կեցո՛ տր . Տէր ողորմեա՛ տր ողորմեա՛ տր ողո" .
Թափօրապետն . փառս ամենազօր և հրաշալի չարչարանացդ քո" .

---

Սարկաւագն . Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ կեցո" .
Թափօրապետն . Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" .
Եւ աստի իջանեն ՚ի խաչ գիւտն . ասելով

Ո՛ր ընդ նախնոյն առիթ մահու փայտ կենաց շնորհեցեր . և ետուր յաղթութիւն մահացու բռնութեանս . ՚ի սմա՛, բանիդ հօր երկրպագեսցուք ։ աձ

Ո՛ր զանձառ լուսոյդ բարձրագոյն ծածկելով հրեղէն ՚ի՝ յերկրէ ծագեցեր զերկնային ճառագայթ . ՚ի սմա՛ բանիդ հօր երկրպագեսցուք ։

Ո՛ր ահաւոր հրաշիւք ցուցեր ըզնըշան խաչի քո՛ . յայտնելով աշխարհի յարութեամբ պատուոյն . ՚ի սմա՛ բանիդ հօր երկրպագեսցուք ։

Սարկաւագն . Որթի .

Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն .

Թափօրակիցքն . Եւ ընդ հոգւոյդ քում . Երկիւղածութեամբ լուարուք .

Թափօրապետն. Այժմ աւետարանիս Յսի Քսի որ ըստ Մատթէոսի.

Թափօրակիցն. Փառք քեզ Տր Ած մեր. Պռօսխումէ. Ասէ Ած.

Թափօրապետն. Տէրն մեր Յս Քս ասէ.

Ի Թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին, և տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։

Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ՝ գիտասջիք թէ մերձ է ի դուրս։

Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամ եղիցի։

Երկինք և երկիր անցցեն. և բանք իմ մի անցցեն։

Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու. ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ որդի՝ բայց միայն հայր։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Ած մեր. Այս խաչիւս աղօ".

Թափօրակիցն. Կեցո՛ Տր. Տր ողորմեա Տր ողորմեա Տր ող".

Թափօրապետն. Պահպանեա՛ և յայս հաւատացելոց Քս Ած մեր".

---

Սարկաւագն. Եւ ևս խաղաղութեան զՏր աղաչեսցուք ընկալ".

Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն".

Եւ անտի եկեալ ի Տր Լուսաւորչի եկեղեցին. ասելով

Որ յորովայնէ ընտրեցար յաստուածմ- Դկ
ծոյ · քարոզօղ ճշմարիտ որդւոյն այ
տեր յօհաննէս · անդադար բարեխօ-
սեա՛ վասն անձանց մերոց ։

Որ յանապատէ կոչեցար 'ի տեսածմանէ ·
մկրտել ըզ բոլորից բարձօղըն մե-
ղաց · տեր յօհաննէս · անդադար բա-
րեխօսեա՛ վասն անձանց մերոց ։

Որ զմարդարէից ընկալար ըզպատածմ-
տիւ · և երգչնորհօք ճշմարիտ սուրբ-
առաքելոցն · տեր յօհաննէս · անդա-
դար բարեխօսեա՛ վա՛ անձանց մերոց ։

( Այս աւետարանս ընթեռնանի տօնջի սուրբ Կարապետի
Սեղանոյն · )

Սուրբասագն · Որթէ ·

Թոփօրագիրն · Խաղաղութիւն ամենեցուն ·

Թոփօրաձայնն · Եւ ընդ հոգւոյդ քում · Երկիւղածութ լուարուք ·

Թոփօրագիրն · Ա՛յ աւետարանիս Յսի Քսի որ ըստ Յօհաննու ·

Թոփօրաձայնն · Փառք քեզ տէր Ած մեր · Պռօսխումէ · Ասէ
Ած ·

Թոփօրագիրն · Տէրն մեր Յս Քս ·

Յետ այսորիկ եկն յս և աշակերտքն
նորա յերկիրն հրէաստանի · և անդ
շրջէր նոքօք հանդերձ և մկրտէր ։

Մկրտէր և յովհաննէս ՚ի յայէնովն,
մերձ առ սաղիմ· զի ջուրք բազումք
էին անդ · և գային, և մկրտէին ։
Զի չև ևս էր արկեալ զյովհաննէս
՚ի բանտ ։ Եւ եղև խնդիր յաշա-
կերտացն յովհաննու ընդ հրէից՝ վ͞ս
սրբութե͞ն ։ Եկին առ յովհաննէս՝ և
ասեն ցնա · ռաբբի, որ էրն ը͞ն քեզ
յանկոյս յորդանանու · որում դու
վկայեցեր · ահաւասիկ նա մկրտէ՝ և
ամենեքին գան առ նա ։
Պատասխանի ետ յովհաննէս՝ և ա-
սէ · ոչ կարէ մարդ առնուլ յանձ-
նէ՝ և ոչ ինչ · եթէ ոչ իցէ տուեալ
նմա յերկնից ՚ի վերուստ ։

Մաղթանքն · Ս͞ք ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր որք զհետն" ·

Քարոզութեան · Որ ընտրեցեր և ընկալար զե-
րանելին և զերջանիկ զմաքուր տա-
ճարն անապատի՝ զսուրբ կարապետն
և զմկրտիչն քո զյօհաննէս ք͞ս ա͞ծ
մեր · և հաղորդս արարեր զնա կա-
մաւոր չարչարանաց քոց ։ Արդ՝ բա-
րեխօս առ քեզ ունիմք · որք աստ և

ընդ ամ̅ տիեզերս 'որք եղեն : Ո՜վ զի աղօթիւք նոցա և բարեխօսութե̅բն՝ խաղաղացուսցես զկենցաղաւարութի̅ն մեր · փրկելով յերևելի և յաներևոյթ թշնամեաց : Շնորհեա՛ մեզ տէր ա̅ծ օրինակի նոցին կեալ · և զվախճանն մեր կնքեա՛ ուղղափառ խոստովանութե̅բ 'ի յոյս կենացն յաւիտենից · զի և մեք արժանի եղիցուք մտանել յերկ-նային խորանսն լուսոյ՝ և ժառանգել զպատրաստեալն 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ : Եւ ք̅զ նովին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ընդ ս̅բյ հոգւոյդ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-տենից · ամէն :

---

Սարկաւագն · Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք" ·

Թափօրադիրն · Օրհնութի̅ և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" ·

Եւ անտի գնան 'ի տեղին՝ ուր է Աւ̅նն · յոր կարդեցին զՔ̅ս 'ի տանն պիղատոսի · ասելով

Ի' յսօր յաւուր նշանակեալ հրաման- զ̅ա
նին քո՛ կատարիւր յաշակերտաց զա-
ւակն քանզի զհովիւդ քաշ հարեա՛ն

ցրուեցաւ հօտն ըստ մարգարէին` ·
որ և կապեցար անկապտելիդ` 'ի յան-
նայէ և 'ի կայիափայ դատապարտեալ ·
'ի ծառայէ ապտակեցար և նախա-
տանաց թուք կերպարանըդ հօր ըն-
կալար · վասն որոյ խնայեա` 'ի մեղ-
քս կամաւոր քո չարչարանօք ։
Այսօր ընդ գերագոյն անօրէնութեդ
քո որդի աստուծոյ հոյլք անմար-
մնոցն հրեղէն սոսկացեալ պակու-
ցեալ զարմանային` տեսանելով զան-
տեսանելին մատնեալ կամաւ 'ի ձե-
ռըս մեղաւորաց` · վասն որոյ երկըր-
պագեմք անճառելի` քո խոնարհու-
թեանդ ։

Սարկաւագն · Ոլթի ·

Թափօրապետն · Խաղաղութիւն ամենեցուն ·

Թափօրախմբեն · Եւ ընդ հոգւոյդ քում · Երկիրպագութ լուսարարք ·

Թափօրապետն · Այս աւետարանս Յսի Քսի որ ըստ Մատթէոսի ·

Թափօրախմբեն · Փառք քեզ տէր Աստուած մեր · Պռօսխումէ · Ասէ
Ած ·

Թափօրապետն · Վասն նախատանաց տեառն մերոյ Յսի Քսի ·

Յայնժամ զինուորք դատաւորին ա-
ռին զՅս յապարանս · և ժողովեցին

ի վերայ նորա զա̃մ զգունդն ։
Մերկացուցին զնա. և արկին զնովաւ քղամիդ կարմիր ։
Եւ բոլորեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա. և եղէգն յաջոյ ձեռին նորա. ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին և ասէին. ողջ եր թագաւոր հրէից ։
Եւ թքեալ ի նա՝ առնուին զեղէգն՝ և հարկանէին զգլուխ նորա ։
Եւ յորժամ ձաղեցին զնա՝ մերկացուցին ի նմանէ զքղամիդն. և ագուցին նմա զիւր հանդերձն. և տարան զնա ի խաչ հանել ։

Սարկաւագն . փառք քեզ տէր ած մեր . խնդրեսցուք" ։
Ժողովուրդն . Կեցո՛ տէր . Տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛ տէր ողո" ։
Ժողովուրդն . Փառս ամենազօր և հրաշալի չարչարանացդ քո" ։

---

Սարկաւագն . Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք ընկալ" ։
Ժողովուրդն . Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն" ։
Եւ անտի եկեալն 'ի տեղ լուանն սարսափելի 'ի գողգոթայ . ասելով

Մօտակայլին՞ սերոբէից՝ բառնայր լին- ԹԼ
քեամբ ըղձփայա խաչին՝ . մինչ 'ի տե-
ղի գողգոթային՝ յորժամ եդեալ մար-

դըն առաջինն․ ետուն ըմպել գինի զմըռսեալ՝ եւ կերակուր լեղեաւ խառ֊նեալ․ որով զպըտղոյն դառըն ճա֊շակ՝ փոխեաց մեզ քաղցր եւ ախոր֊ժակ ։

Բարձրեալդ խաչանշանեցար՝ ած մարմ֊նով վասն իմ խաչեալդ․ մերով բնու֊թեամբքս մեռանի՝ ած անմահ խառ֊նակալմնի․ կրկնավտանգ կողին աղ֊բերք՝ եկեղեցի խոր հաստատի․ Ձո֊րովըն միւռոնի՝ զարիւնն ըմպէ՝ զօրհնէ ընդ հօր փառաւորէ ։

Սարկաւագն . Որթի .

Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն .

Թափօրախօսն . Եւ ը՛ հոգւոյդ քում . Երկիւղածութեամբ լուարուք .

Թափօրապետն . Ս՛յ աւետարանէս Յի՛ի Ք՛ի որ ը՛ Մատթէոսի .

Թափօրախօսն . փառք քեզ տր ած մեր . Պռօսխումէ . Ասէ Ած .

Թափօրապետն . Վասն խաչելութեան տեառն մերոյ Յի՛ի Ք՛ի .

Նոյն եւ աւազակքն՝ որք խաչեալ էին ընդ նմա՝ նախատէին զնա ։ Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար ե֊ղեւ ի վերայ ամ երկրի մինչեւ ցինն ժամ ։ Եւ զինն ժամաւն գոչեաց յս

ի ձայն մեծ՝ և ասէ. Էլի Էլի՝ լա-մասաբաքթանի. այսինքն է. Աստուած իմ, Աստուած իմ. ընդէ՞ր թողեր զիս։
Ոմանք յայնցանէ որք անդ կային, իբրև լուան՝ ասէին. զԵղիա կարդայ։
Եւ վաղվաղակի ընթացեալ միոյն ի նոցանէ՝ էառ սպունգ լի քացախով՝ և հարեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա։ Եւ կէսքն ասէին. թո՛ղ՝ տեսցուք եթէ գայ Եղիա փրկել զդա։
Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ՝ և արձակեաց զոգին։

Եւ ապա ՚ի ծունր անկեալ ասեն զԾը. ԱԾՆ երիցս առանց փառաւորելոյ. և զկնի որ ասեն Տէր ողորմեա և ս ՚ի ծունր. Սրբասացուածն. փառք քեզ տէր ած մեր. Ամն. խաչեցար առն". Թափօրականն. Կեցո տր. Տր ողորմեա տր ողորմեա տր ող".

Թափօրադէտն. Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով. և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի առաւել բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։ Եւ այժմ վասն որոյ Ածային քո նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամ աշխարհի։

Սարկաւագն . Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ" .
Թափօրապետն . Օրհնութի՛ւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն" .
Եւ անուն իջանեն ՚ի դր. Պատանատեղն . ասելով՝

ըծ Կուսածին մարմնով քո այսօր դը-
նի ՚ի կոյս գերեզմանի՝ . և լուծիչն
երկանց դժոխոց՝ մատանեաւ կնքեն
քահանայիցն :
Արթուն բնութեամբ արարիչն ա-
մենեցուն այսօր . ննջէ ՚ի մէջ մահա-
ցելոց՝ . որ պահէին զիսրայէլ անքուն՝
պահպանի ՚ի զինուորաց :
Ցնծութիւն արարածոց քո այսօր .
արտասուի որպէս մեռեալ ՚ի տըրտ-
մագնեցից՝ . և բուրումն անմահութե-
ան խնկի ՚ի զգաստից իւղաբերից :

Սարկաւագն . Ուղղի .
Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն .
Թափօրախմբն . Եւ ընդ հոգւոյդ քում . Երկիրպագութի իւրաքանչիւր .
Թափօրապետն . Այս աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի .
Թափօրախմբն . Փառք քեզ Տէր Աստուած մեր . Պռօսխումէ . Ասէ
Ած .
Թափօրապետն . Վասն Թաղման անուան մերոյ Յիսուսի Քրիստոսի .

Եւ իբրև երեկոյ եղև , քանզի ուր-
բաթ էր՝ որ ՚ի շաբաթն մտանէր :

Եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր·
այր պարկեշտ Նախարար, որ և ինքն
իսկ ակնունէր արքայութեան այ· համ-
արձակեցաւ՝ եմուտ առ պիղատոս·
և խնդրեաց զմարմինն յսի :

Եւ պիղատոս զարմացաւ, թէ այն-
չափ վաղ մեռաւ· և կոչեալ առ ին-
քըն զհարիւրապետն, եհարց զնա,
և ասէ՝ թէ արդարև այնչափ վաղ
մեռաւ : Եւ իբրև ստուգեաց 'ի հա-
րիւրապետէ անտի, շնորհեաց զմար-
մինն յովսեփայ :

Եւ յովսէփ գնեաց կտաւ՝ և իջու-
ցեալ զնա՝ պատեաց կտաւովն· և եդ
'ի գերեզմանի· որ էր փորեալ 'ի վէ-
մէ· և թաւալեցոյց զվէմ մի 'ի դու-
ռըն գերեզմանին :

Իսկ մարիամ մագդաղենացի· և մա-
րիամ յակովբայ և յովսեայ՝ տեսին
զտեղին՝ ուր եդաւ :

Սարկաւագն · Փառք քեզ տր մծ մեր · խնդրեսցուք հաւա" ·

Թափօրականքն · Կեցո՛ տր · Տր ողորմեա՛ տր ողորմեա՛ տր տր" ·

Թափօրապետն · Քս ամենազօր և հրաշալի թագաւոր քո" ·

Սարկաւագն · Եւ ևս խաղաղութ զտր աղաչեսցուք ընկալ կեցո" ։

Թափօրապետն . Օրհնութի՜ւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն" .
Եւ անտի երթան ՚ի սբ. Գերեզման Տն մերոյ Յսի Քսի . ասելով

աէ Սքանչելի հրեշտակըն տեսողըն ցըն-
ծութեամբ իջեալ ՚ի գերեզմանըն հար-
կանէածր . փոխ յարութեըն տեառն :
՚Ի՝ հարկանել փոխոյն պահապանքըն
զարհուրեցան և եղեն . ՚ի յահէն
որպէս մեռեալ :
Ձայն եղեւ՝ ՚ի հրեշտակէն՝ բարբառ
եղեւ ուրախութեան ՚որ յարեաւձե .
փառք յարութեանըն տեառն :
Դրօքըրն փակեալք երեւեալ յայ աշա-
կերտացն և ասէձր . խաղաղութի
ընդ ձեզ :

( Այս աւետարանս երգեսի ՚ի ներքս ՚ի սուրբ Գերեզմանն ընթեռնանի . և երգեսի առաջի դրան նորա . )

Սարկաւագն . Ուրթի .

Թափօրապետն . Խաղաղութիւն ամենեցուն .

Թափօրախումբն . Եւ ընդ հոգւոյդ քում . Երկիւղածութ լուարուք .

Թափօրապետն . Սրբոյ աւետարանիս Յսի Քսի որ ըստ Մատթէոսի .

Թափօրախումբն . Փառք քեզ Տր ած մեր . Պռօսխումէ . Ասէ ած .

Թափօրապետն . Վասն Յարութեան տեառն մերոյ Յսի Քսի .

Ն՞ւ յերեկոյի շաբաթուն յորում լու-
սանայր միաշաբաթին . եկն մարիամ

մագդաղենացի, և միւս մարիամն տեսանել զգերեզմանն ։

Եւ ահա շարժումն մեծ եղև . զի հրեշտակ տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի դրանց անտի . և նստէր ՚ի վերայ նորա ։ Եւ էր տեսիլ նորա իբրև ըզփայլակն . և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն ։

Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն . և եղեն իբրև զմեռեալս ։

Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն . մի՛ երկնչիք դուք . գիտեմ՝ զի զյ͞ս զխաչելեալն խնդրէք ։ Չէ՛ աստ . քանզի յարեաւ՝ որպէս ասացըն ։ Եկա՛յք և տեսէ՛ք զտեղին՝ ուր կայր ։

Թափօրականքն . Տէր ողորմեա . և Երգ .

Սարկաւագն . Խնդրեսցուք հաւատով միաբանութիւն ՚ի Տնէ՛" .

Թափօրականքն . Կեցո՛ զմեզ . Տ͞ր ողորմեա՛ զմեզ ողորմեա՛ զմեզ ող" .

Թափօրապետն . Քո՛ւմ ամենազօր և հրաշալի յարութեանդ քո՛" .

---

Սարկաւագն . Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք" .

Թափօրապետն . Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն" .

Եւ ապա շուրջ գալով զգերեզմանաւ տան , և գան ՚ի վիճակն

մեր ՚ի յարուժամանակման տեղին սրբուհւոյ Աստուածնին . առնելով

Սիոնի որդիք զարթիք՝ հարսին լու-
սոյ տուք աւետիք՝ . եթէ փեսայն քո
յարուցեալ յաղթեաց՝ մահու իշխա-
նութեանն . դայ պսակէ ընդ քեզ փա-
ռօք՝ եւ ընդ առաջ պճնեալ զար-
դուք . երգեա երգ նոր յարուցելոյն
ննջեցելոց կենարարին պատուողին ։
Նորեցար խնկաբերիցն՝ յողջոյն կե-
նաց ուրախալից՝ . եւ ՚ի լերին նոյն
գալիլեայ՝ առաքելոց մետասանից՝ .
արժանացո զմեզ ընդ նոսին՝ զքեզ
տեսանել յօրէն վերջին՝ . երկայք փառ-
կեանք ընդ զուարթնոյն տուք օրհ-
նութիւն յարուցելոյն ։

Մաղթանք . Որթի .

Թափօրագէտն . Խաղաղութիւն ամենեցուն ։

Թափօրաքանն . Եւ ընդ հոգւոյդ քում . Երկիրպագեմք լուսոյդ .

Թափօրագէտն . Սէջ աւետարանիս Յիսի Քրի որ ըստ Յովհաննու .

Թափօրաքանն . փառք քեզ տէր աստ մեր . Պատասխանի . Աստ

Ած .

Թափօրագէտն . ՚Ի ժամանակի խաչելութեան տեառն մերոյ Յսի Քրի ։

Կա կային առ խաչին յիսի մայր նո-
րա . եւ քոյր մօր նորա մարիամ կղ-

ղէօպայ ․ և Մարիամ Մագդաղենացի ։ Յ͞ս իբրև ետես զմայրն , և զաշակերտըն , զոր սիրէր , զի կայր մօտ ․ ասէ ցմայրն , կին դու , ահա որդի քո ։ Ապա ասէ ցաշակերտըն , ահա մայր քո ․ և յայնմ ժամանակէ էառ աշակերտըն զնա առ իւր ։ Յետ այսորիկ գիտաց Յ͞ս , եթէ ահա ա͞մ ինչ կատարեալ է ․ զի կատարեսցի գիրն , ասէ ․ Ծարաւի եմ ։ Եւ անդ կայր աման ինչ լի քացախով ․ և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ եղեւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին ՚ի բերան նորա ։

Իբրև էառ Յ͞ս զքացախն համդերձ լեղւովն՝ ասէ ․ ա͞մ ինչ կատարեալ է ․ և խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին ։

Սարկաւագն ․ Ս͞բ զԱ͞ծածինն և զա͞մ ս͞բս բարեխօս արասցուք" ․

Ժողովուրդն ․ Կեցո՛ տր ․ Տ͞ր ողորմեա՛ տր ողորմեա՛ տր ողոր" ․

Ժողովուրդն ․ Ընկա՛լ տ͞ր զաղաչանս մեր բարեխօսութ͞բ սրբ" ․

Օրհնեալ տ͞ր մեր յ͞ս ք͞ս ․ ամէն ․ Հայր մեր որ յերկինս ես" ․

Օրհնեա՛լ եղիցի ՚ի շնորհաց որդւոյ հոգւոյն ․ երթայք խաղաղութեամբ ․ և տ͞ր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան ․ ամէն ․

Թափօրականն. Բուռն ամենազօր և հրա-
շալի յարութեամբ քո ած մեր՝ երկիր-
պագանեն զօրք հրեշտակաց. զի դու
միայն ունիս զանմահութի բնակեալդ
ի լոյս անմատոյց։ Եւ մեք հողեղէն
արարածքս՝ խոնարհեալ երկիւղիւ
երկրպագանեմք. զքո և զհրաշալի և
զյաղթօղ յարութիւն քո օրհնեմք և
փառաւորեմք։ Եւ քեզ ընդ երկնային
զօրսն մատուցանեմք զօրհնութի և
զփառս ընդ հօր և ընդ սբյ հոգւոյդ.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

Թափօրականն. Ընկա՛լ տէր զաղաչանս մեր
բարեխօսութբ սրբուհւոյ ածածնին
անարատ ծնողի միածնի որդւոյ քո.
և աղաչանօք ամ սրբոց քոց. և որոց
այսօր է յիշատակ։ Լուր մեզ տէր
և ողորմեա՛. ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ
զմեղս մեր։ Արժանաւորեա՛ զգոհութբ
փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ
սբյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւ-
իտեանս յաւիտենից. ամէն։

ССР Библиотека
ՀՍՍՌ—Арм.ССР
им. А. Мясникяна